ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք.Երևան 01.04.2022թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2022/114

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Ֆ. Մանգյանի

Պատվիրատու՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ
Մասնակից՝ «Լեբրոն» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, ձիու մսի ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ նաև՝ Բողոքներ քննող անձ), ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 14.03.2022թ.-ի թիվ 26/26-1/4237-2022 գրությամբ «Լեբրոն» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը</u>.**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատու) 03.03.2022թ.-ի թիվ 8 գրության հիման վրա, 14.03.2022թ.-ին «Լեբրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի գործը մակագրվել է 14.03.2022թ.-ին:

14.03.2022թ.-ին www.gnumner.am կայքում հրապարակված հայտարարությամբ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ընդունվել է վարույթ և տրվել է թիվ ՍՑ-ԼՕ-2022/114 համարի ծածկագիրը:

23.03.2022թ.-ին և 01.04.2022թ.-ին նշանակվել և հրավիրվելեն նիստեր:

Գործի քննությունն ավարտվել է 23.03.2022թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 01.04.2022թ.-ին:

2. «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.

«Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ը 03.03.2022թ.-ի թիվ 8 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«Հայտնում ենք Ձեզ, որ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կարիքների համար իրականացված ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/05 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 04.02.2022թ. N3 արձանագրությամբ «Լեբրոն» ՍՊԸ-ն ճանաչվել է ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակից: 14.02.2022թ. «Լեբրոն» ՍՊԸ-ին էլեկտրոնային փոստի ծանուցմամբ առաջարկվել է կնքել պայմանագիր: Սակայն ընտրված մասնակից ճանաչված

«Լեբրոն» ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագրի կնքումից՝ ՀՀ Գնումների մասին օրենքի 35-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով չներկայացնելով որակավորման և պայմանագրի ապահովումները, ինչպես նաև իրենց կողմից ստորագրված պայմանագիրը /կցվում է պայմանագիր կնքելու առաջարկի ծանուցման հավաստումը/:

Խնդրում ենք ձեզ նախաձեռնել «Լեբրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 45-րդ կետի պահանջները, կից ներկայացվել է «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/05» ծածկագրով հայտարարված գնման ընթացակարգի շրջանակներում «Լեբրոն» ՍՊԸ-ի տվյալները՝ համապատասխան հիմքերով:

3. <u>«Լեբրոն» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 14.03.2022թ.-ին գրությամբ դիմել է «Լեբրոն» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.03.2022թ.-ի թիվ 26/26-1/4237-2022 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով հրավիրված նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացել հրավիրված նիստերին:

«Լեբրոն» ՍՊԸ-ն 01.04.2022թ.-ին ներկայացրած գրավոր դիրքորոշմամբ հայտնել է հետևյալը.

«Տեղեկացնում ենք, որ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կարիքների համար ձիու մսի մատակարարման ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/05 ծածկագրով ընթացակարգին մասնակցել է մեև ընկերությունը և հաղթել:

Ծանոթանալով ՀՈԱԿ-ի ներկայացրած գրությանը՝ գտնում ենք, որ ՀՈԱԿ-ը աղավաղում է իրականությունը, քանի որ մեր ընկերությունը հանձնաժողովին փոստային ծառայության միջոցով ուղարկել է պայմանագիր, պայմանագրի ու որակավորման ապահովումները: Ինչը ՀՀ ֆինանսների նախարարությանը ուղղված գրությամբ հանձնաժողովը թաքցրել է և հայտնել է, որ մեր կողմից չի ներկայացվել: Այն չի համապատասխանում իրականությանը:

Հարգելի գնումների հետ կապված բողոքներ քննող անձ կարող եք ինքներդ հարցնել հանձնաժողովին ու հավաստիանալ, որ մենք պահանջված փաստաթղթերը ներկայացրել ենք հանձնաժողովին:»:

4. <u>ՍՑ-LO-2022/114 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

i. «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից ձիու մսի ձեռքբերման նպատակով 24.01.2022թ.-ին հայտարարվել է «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

ii. Ընթացակարգին մասնակցելու նպատակով հայտ է ներկայացրել «Լեբրոն» ՍՊԸ-ն:

iii. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.11.2021թ.-ին կայացված նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ ընթացակարգի արդյուքնում ընտրված մասնակից է ճանաչվել «Լեբրոն» ՍՊԸ-ն:

iv. 07.02.2022թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է անգործության ժամկետ՝ 5 օրացուցային օր:

v. Հանձնաժողովի 28.02.2022թ.-ի նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Լեբրոն» ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագրի կնքումից, այն է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով չի ներկայցրել իր կողմից ստորագրված պայմանագիրը, ինչպես նաև որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները:

vi. Մասնակցի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ DLES102515951AM կոդով նամակը «Լեբրոն» ՍՊԸ-ն 28.02.2022թ.-ին 1614 Փ/Բ-ից ուղարկել է «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ին:

vii. www.haypost.am կայքի ուսունասիրության արդյունքում հնարավոր չի եղել հայտնաբերել փոստային կտրոնի DLES102515951AM կոդով նամակը, քանի որ այն ուղարկվել է հասարակ՝ ոչ պատվիրված տարբերակով:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների

նախարարության կողմից 14.03.2022թ.-ի թիվ 26/26-1/4237-2022 գրությամբ «Լեբրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն՝ ... մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, և որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց:

Օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պայմանագրի ապահովում ներկայացնելու պահանջի հիման վրա այն ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում ընտրված մասնակիցը պարտավոր է ներկայացնել պայմանագրի ապահովում: Ընտրված մասնակցի հետ պայմանագիր կնքվում է, եթե վերջինս ներկայացնում է պայմանագրի ապահովում:

Օրենքի 36-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին ներկայացնում պայմանագրի ապահովումը, ապա նա զրկվում է պայմանագիրն ստորագրելու իրավունքից:

ՀՀ կառավարության 18.05.2017թ.-ի թիվ 534-Ն հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 10-րդ կետի համաձայն՝ էլեկտրոնային աճուրդով գնումների կատարման և ընտրված մասնակցի հետ պայմանագրի կնքման ժամանակ գործումեն Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման 1-ին կետի 1-ին ենթակետով հաստատված կարգով նախատեսված կարգավորումները.....:

ՀՀ կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ նաև՝ Կարգ) 32-րդ կետի 12-րդ և 13-րդ ենթակետերի համաձայն՝ ընտրված մասնակցին պայմանագիր կնքելու առաջարկը և կնքվելիք պայմանագրի նախագիծը հանձնաժողովի քարտուղարը տրամադրում է էլեկտրոնային եղանակով: Ձիու մսի գնման դեպքում պայմանագրի

նախագծում ներառվում է ընտրված մասնակցի կողմից հայտով ներկայացված ապրանքի ամբողջական նկարագիրը: Ընտրված մասնակցի կողմից հաստատված պայմանագրի նախագիծը պատվիրատուին ներկայացվում է գրավոր, և դա ներկայացնելու գրությունը հաշվառվում է պատվիրատուի փաստաթղթաշրջանառության համակարգում: Պատվիրատուի ղեկավարի կողմից պայմանագրի նախագիծը հաստատվում է այդ իրավասության առաջացմանը հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում:

Նույն կետի 19-րդ ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին հավաստումը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող, կամ մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը կամ ընտրված մասնակիցը չի ներկայացնում որակավորման ապահովումը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում նախաձեռնում է տվյալ մասնակցին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

Կարգի 50-րդ կետի համաձայն՝ ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է օրենքի 10-րդ և 36-րդ հոդվածներով նախատեսված կարգով,Եթե ներկայացվել է նաև որակավորման ապահովումը հիմնավորող փաստաթուղթը: Ընդ որում, ձիու մսի գնման դեպքում ապրանքի ամբողջական նկարագիրը պայմանագրում ներառվում է՝ համաձայն ընտրված մասնակցի կողմից ներկայացված և գնահատող հանձնաժողովի կողմից բավարար գնահատված առաջարկի:

Վերոնշյալ դրույթների համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ ընտրված մասնակիցը, հանձնաժողովի քարտուղարի կողմից էլեկտրոնայինԵղանակով ստանալով պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծը, պարտավոր է 10 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուին ներկայացնել իր կողմից հաստատված պայմանագրի նախագիծն, որակավորման և պայմանագրի կատարման ապահովումը:

Ընդ որում, եթե ընտրված մասնակիցը պայմանագիր կնքելու մասին ծանուցումը և պայմանագրի նախագիծն ստանալուց հետո՝ 10 աշխատանքային օրվա ընթացքում, չի ստորագրում պայմանագիրը և պատվիրատուին չի ներկայացնում ներկայացված գնային առաջարկի չափով որակավորման ապահովում, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորության խախտում, ինչպես նաև չներկայացնելով պայմանագրի ապահովում, վերջինս զրկվում է պայմանագիրը ստորագրելու իրավունքից:

Նման դեպքում առաջանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերի դրույթների կիրառման անխուսափելիությունը, քանի որ Մասնակիցն իր գործողություններով կամ անգործությամբ, խախտելով գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, հանգեցնում է Պատվիրատուի կողմից գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև վերջինիս գործողությունները (անգործությունը) գնահատվումեն որպես պայմանագիր կնքելուց ընտրված մասնակցի կողմից հրաժարում:

Վերը շարադրվածից ելնելով՝ մասնակիցը պետք է ընդգրկվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝Երկու տարի ժամկետով, քանի որ խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը՝ հրավերով սահմանված կարգով և ժամկետում չներկայացնելով որակավորման ապահովում, որն էլ հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը, ինչպես նաև պատվիրատուին չներկայացնելով պայմանագրի օրինակը և/կամ ապահովումը զրկվել է պայմանագիր կնքելու իրավունքից:

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ մինչև ժամկետի վերջին օրվա ժամը 24:00-ն կապի կազմակերպությանը հանձնված փաստաթղթերը համարվումեն ժամկետում հանձնված:

Սույն գործի փաստերի համաձայն՝ «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ի կողմից ձիու մսի ձեռքբերման նպատակով 24.01.2022թ.-ին հայտարարված «ԵՔԿԱ-ԳՀԱՊՁԲ-22/05» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 10.11.2021թ.-ին կայացված նիստի թիվ 3 արձանագրությամբ արձանագրվել է, որ ընթացակարգի արդյուքնում ընտրված մասնակից է ճանաչվել «Լեբրոն» ՍՊԸ-ն, ինչով պայմանավորված 07.02.2022թ.-ին պայմանագիր կնքելու նպատակով գնումների պաշտոնական տեղեկագրում՝ www.gnumner.am կայքում, Հանձնաժողովի կողմից հրապարակվել է պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարություն և սահմանվել է

անգործության ժամկետ՝ 5 օրացուցային օր: Սակայն Հանձնաժողովի 28.02.2022թ.-ի նիստի թիվ 4 արձանագրությամբ արձանագրվել է, որ «Լեբրոն» ՍՊԸ-ն հրաժարվել է պայմանագրի կնքումից, այն է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածով սահմանված ժամկետում և կարգով չի ներկայցրել իր կողմից ստորագրված պայմանագիրը, ինչպես նաև որակավորման և պայմանագրի կատարման ապահովումները:

Սույն գործում առկա՝ Մասնակցի կողմից տրամադրված տեղեկանքի համաձայն՝ DLES102515951AM կոդով նամակը «Լեբրոն» ՍՊԸ-ն 28.02.2022թ.-ին 1614 Փ/Բ-ից ուղարկել է «Երևանի կենդանաբանական այգի» ՀՈԱԿ-ին: www.haypost.am կայքի ուսումնասիրության արդյունքում հնարավոր չի եղել հայտնաբերել փոստային կտրոնի DLES102515951AM կոդով նամակը, քանի որ այն ուղարկվել է հասարակ՝ ոչ պատվիրված տարբերակով:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս գալ այն եզրահանգման, որ «Լեբրոն» ՍՊԸ-ն, 28.02.2022թ.-ին կապի կազմակերպությանն է հանձնել պահանջված փաստաթղթերը, որը «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի իմաստով համարվում է ժամկետում հանձնված:

Ամբողջացնելով վերոգրյալները՝ Բողոքներ քննող անձը փաստում է, որ Պատվիրատուն կարող էր Կարգի 45-րդ կետով սահմանված ու իր վրա դրված պարտավորությունը կատարել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթների հաշվառմամբ, որի արդյունքում ստանալով «Լեբրոն» ՍՊԸ-ի կողմից ուղարկված ապահովումները կհամարվեր ժամկետում ներկայացված, ուստի և պայմանագիրը կնքված:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում՝ Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Լեբրոն» ՍՊԸ-ն, որպես ընտրված մասնակից, Օրենքով սահմանված կարգով և ժամկետներում, 28.02.2022թ.-ին Պատվիրատուին ներկայացրել է համապատասխան փաստաթղթերը, որպիսի պայմաններում Մասնակիցը չի հրաժարվել պայմանագիր կնքելուց:

Վերոնշյալներով պայմանավորված՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» և «բ» ենթակետերում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 14.03.2022թ.-ի թիվ 26/26-1/4237-2022 գրությամբ «Լեբրոն» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2022/114 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**